«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2015 թվականի

2015-2016 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին

Լսելով և քննարկելով **«2015-2016 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին»** հարցը (զեկուցող՝ ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. ընդունող հանձնաժողովը գործել է ՀՀ ԿԳՆ-ի հաստատած կանոնակարգի պահանջներին համաձայն: Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 926 տեղ, որից 60-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 866-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ ընդունվել է 91 (այդ թվում 10-ը՝ ՀՀ ՊՆ պատվերով) դիմորդ, իսկ վճարովի ուսուցման համակարգում՝ 888 դիմորդ: ԼՂՀ-ին հատկացված նպատակային տեղերը համալրել է 13 դիմորդ, սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով՝ 27 դիմորդ: Այսպիսով՝ առկա ուսուցման բակալավրիատ է ընդունվել 1019 դիմորդ:

Առկա ուսուցման մագիստրատուրա է ընդունվել 341 դիմորդ. 138-ը (հատկացվել է 160 տեղ) համալրել են ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ տեղերը, 203-ը՝ վճարովի ուսուցման համակարգինը:

Հեռակա ուսուցման բակալավրիատ դիմել է 319 դիմորդ. մրցույթով ընդունվել են 276-ը:

Հեռակա ուսուցման մագիստրատուրային հատկացվել է 330 տեղ (դիմել են 261-ը). մրցույթով ընդունվել են 247-ը:

Ելնելով վերոգրյալից՝ համալսարանի գիտական խորհուրդը **որոշում է.**

1. 2015-2016 ուսումնական տարվա ընդունող հանձնաժողովի աշխատանքը գնահատել բավարար:
2. Հանձնարարել մարքեթինգի և կարիերիայի կենտրոնին՝ հարստացնել ապագա դիմորդներին տրվող տեղեկատվությունը և համալսարանի կայքի միջոցով կատարելագործել դրա տրամադրման ձևերն ու կառուցակարգերը:
3. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**
10.11.2015 թ.